




#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ



ՏԵՂԵԿԱԳԻՐ 7, ՕԳՈՍՏՈՍ 2021



ՓԱՍՏԵՐԻ
ՍՏՈՒԳՄԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

ՓԱՍՏԵՐԻ
ՍՏՈՒԳՈՒՄԸ
ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԱԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ՆԱԽՈՐԴ
ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ ՏԵՍ
ԱՅՍՏԵՂ



Ինչպես վարել Փաստերի ստուգման դասընթացը

«Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի մեկնարկին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ի հետ մշակեց «Փաստերի ստուգում» դասընթացի ծրագիրը, որը նախատեսված է ծրագրի շրջանակներում 5 կրթական հաստատությունում ստեղծված Փաստերի ստուգման լաբորատորիաների դասընթացավարների համար: Դասընթացի հիմնական խնդիրներից է դասավանդող մասնագետների համար ուղենշել այն հիմնական թեմաները, որոնք անհրաժեշտ են փաստերի ստուգման սկզբունքների, այդ նպատակով կիրառվող լրագրողական հմտությունների, թվային հիմնական գործիքների մասին դասավանդելու համար:



Տեղեկագիրը պատրաստվել և հրատարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Փաստերի ստուգում» դասընթացի նպատակն է աջակցել կրթական հաստատություններին ուսուցանել ապատեղեկատվության դեմ պայքարի առկա գործիքներն ու մեխանիզմները, աշակերտներին և ուսանողներին փոխանցել տեղեկությունների ստուգման գործնական գիտելիք և հմտություններ: Ստացած գիտելիքը աշակերտներն ու ուսանողները կկիրառեն ուսումնական հաստատություններում ստեղծվող «Փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներում»:

Դասընթացը նախատեսված է այն մասնագետների համար, ովքեր պետք է դասավանդեն ծրագրի շրջանակում ձևավորվող «Փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներում»: Ելնելով իրենց ղեկավարության տակ գտնվող լաբորատորիայի մասնակիցների նախնական պատրաստվածության աստիճանից, դավասանող մասնագետները ազատ են ընտրելու Դասընթացում ներկայացված թեմաներից առավել նպատակահարմարները, ինչպես նաև ավելացնել պակասող բաժինները:

Դասընթացը բաղկացած է 14 հիմնական բաժնից, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է փաստերի ստուգման առանձին հիմնահարցերի ու դրանց լուծման միջոցներին ու գործիքներին:

Դասընթացն ավարտած ուսանողները/աշակերտները կունենան հիմնարար գիտելիք և հմտություններ լրագրության հիմունքների, լրագրողական աղբյուրների, տեղեկություններ փնտրելու, տարածելու մեխանիզմներին, փաստերի ստուգման անալոգային և թվային մեթոդների, գործիքների մասին և կկարողանան դրանք ինքնուրույն կիրառել փաստերի ստուգման և ճշգրտված տեղեկությունների տարածման նպատակով:

«Փաստերի ստուգում» դասընթացի ծրագիր >>>

Դասավանդման հիմնական մեթոդը ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումն է: Այն ներառում է ուսուցման, խնդիրների լուծման և որոշումների կայացմանն առնչվող բազմաթիվ առանձնահատկություններ, որոնց շնորհիվ սովորողները ձեռք են բերում նոր գիտելիք և հմտություններ հետևյալ փուլերի միջոցով.

- խնդրի բացահայտում,
- խնդրի հիմքում ընկած վերաբերմունքի և համոզմունքների բացահայտում,
- խնդրի հիմքում առկա փաստերի և սկզբունքների պարզաբանում,
- ապացույցների հայտնաբերում և վերլուծություն,
- խնդրի մեկնաբանում և լուծում, գործողություններ ձեռնարկել և վերանայել յուրաքանչյուր փուլից բխող հետևանքներն ու արդյունքները:

Այս մեթոդը հնարավորություն կտա ուսանողին բացահայտել և խորքային յուրացնել թեմաները:

Ուսուցումն իրականացվում է հետևյալ միջոցների համադրմամբ.

1. Դասախոսություններ,
2. Գործնական քննարկումներ,
3. Գործնական աշխատանք լսարանում (դասարանում),
4. Գործնական աշխատանք լսարանից (դասարանից) դուրս:

Դասընթացի ուսուցման ընթացքում դասախոսը նախևառաջ ուսանողներին ներկայացնում է տվյալ թեմայի վերաբերյալ դասախոսություն՝ փոխանցելով տեսական գիտելիք, որն անպայման զուգորդվում է գործնական օրինակներով ինչպես տեղական, այնպես էլ միջազգային պրակտիկայից:

Դասընթացում կիրառվող օժանդակ մեթոդներից է նաև դեպքերի ուսումնասիրման (case study) մեթոդը: Այն ներառում է մեկ կոնկրետ դեպքի կամ իրադարձության խորքային քննություն: Այս մեթոդի շնորհիվ ուսանողներն ուսումնասիրում են գործնական օրինակներ՝ տեսնելու, թե ինչպես կարելի է կիրառել տեսական գիտելիքն իրական և կոնկրետ օրինակում: Այս մեթոդի շնորհիվ ուսանողները կարողանում են ավելի խորը և համակողմանի հասկանալ թեման:

Թեմա 4. Մեդիայի տեքստ, համատեքստ, մանիպուլյացիա, փաթեթավորում

Այս թեմայի շրջանակում մասնակիցները պետք է պատկերացում կազմեն մեդիայով տարվող մանիպուլյացիաների, թեմայի շեշտադրումները փոխելու մասին: Դասավանդողը պետք է փորձի ամենօրյա օրինակներով ցույց տալ, թե ինչպես, օրինակ, հնարավոր է նույն թեման լուսաբանել՝ տարբեր շեշտադրումներով և ստանալ լրիվ այլ ենթատեքստ:


Ուսանողներին հարկավոր է ներկայացնել թե՛ տեքստային, թե՛ լուսանկարներով, թե՛ տեսանյութերով/մոնտաժի օգնությամբ և վիզուալիզացիայի կիրառմամբ մանիպուլյացիաների օրինակներ:

Քննարկվում են մանիպուլյացիաները.

- Վերնագրում
- Տեքստում
- Մեջբերվող աղբյուրներում
- Կից լուսանկարներում և տեսանյութերում

Վարժություն/հանձնարարություն.

Աշակերտները բաժանվում են խմբերի և ընթերցում են նախապես ընտրված հոդված միևնույն իրադարձության մասին, բայց տարբեր քաղաքական կողմնորոշում ունեցող լրատվամիջոցների լուսաբանմամբ: Այնուհետև ամեն խումբ ներկայացնում է, թե ինչ է տեղի ունեցել՝ հիմնվելով նյութում եղած փաստերի վրա: Այնուհետև որպես խումբ վերլուծում են ստացած տեղեկատվությունը, փորձում են գտնել մեդիա մանիպուլյացիայի, տարբեր փաթեթավորման և շեշտադրումների օրինակներ ներկայացված հոդվածներում:



Ինչպես գտնել ջնջված կամ ձեւափոխված տեղեկատվությունը

Հաճախ անհրաժեշտ է լինում փնտրել ու գտնել հրապարակված նյութի նախնական տարբերակը, քանի որ այն, օրինակ, ձեւափոխվել է, վերացվել կամ կորսվել է կարելու տեղեկատվություն: Կամ հնարավոր է՝ էջը ջնջվել է, մեկ այլ պատճառով էլ՝ տվյալ պահին անհասանելի է: Նման դեպքերում այս տեղեկատվությունը հասանելի է դառնում որոնողական համակարգերի միջոցով, քանի որ դրանք հաճախ պահպանում են էջը՝ իր նախնական տեսքով: Որոնողական համակարգում պահպանված էջը կոչվում է քեշ: Քեշերը վերականգնելու համար «Գուգլ»-ում կիրառվում է cache: օպերատորը ամեն մի հղման համար:

«Գուգլ»-ում քեշերից հանած էջը պարունակում է այն օրը, ժամն ու րոպեն, երբ համակարգը իր մոտ ֆիքսել է տվյալ էջը: Պետք է հաշվի առնել, որ համակարգը ներկայացնում է ժամանակն ըստ GMT, այսինքն՝ Լոնդոնի ժամանակով: Երեւանի ժամանակին անցնելու համար հարկավոր է հաշվի առնել ամառային եւ ձմեռային ժամանակների փոփոխությունները, ինչի համար կարելի է օգտվել <http://www.timebie.com/std/gmt.php> ժամանակի կոնվերտորից:

ՓԱՍՏԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄՆ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ԻՆՉՊԵՍ ՏԵՂՈՐՈՇԵԼ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Ինչպես ստուգել **Տեղորոշել** լուսանկարը, տեսանյութը



Փնտրիր որոնողական համակարգերով

Տեսանյութից առանձնացրու պատկերներ, որտեղ երևում են կոնկրետ օբյեկտներ: Որոնիր դրանք որպես լուսանկար:



Ուշադրություն դարձրու՝ եղանակին

Եթե մոտավոր տեղեկություն ունես լուսանկարում երևացող վայրի մասին, եղանակային պայմանների ուսումնասիրությունը, սովորի դիրքը և ժամը կօգնի մանրամասներ պարզել տեղանքի մասին:



Օգտվիր առցանց քարտեզներից

Google Maps, Google Earth, Wikimapia և այլ հարթակներ ոչ միայն քարտեզներ են այլ նաև արբանյակային լուսանկարների արխիվ:



Ստուգի՛ր մետատվյալները

Լուսանկարների մետատվյալները կարելի է ստուգել և՛ օնլայն, և՛ համակարգչի միջոցով: Այն կարող է թաքցնել կարևոր տեղեկություններ պատկերի մասին:

ԻՆՉՊԵՍ ԱՏՈՒԳԵԼ ՏԵՍԱՆՅՈՒԹԸ

Ինչպես ստուգել **Տեսանյութերը**



Օգտվիր տեսանյութերի ստուգման հարթակներից

Գոյություն չունեցող իրադարձություններ և տվյալներ՝ լսարանի կարծիքը մանիպուլացնելու համար



Փորձիր տեղորոշել

Եթե նկատելի են օբյեկտներ, որոնք հնարավոր է տեղորոշել՝ առանձնացրեք լուսանկարներ և որոնեք համացանցում



Ուշադրություն դարձրու՝ եղանակին

Եղանակային պայմանները կարող են օգնել պարզելու, թե երբ է նկարահանվել տեսանյութը: **Wolfram Alpha** և **SunCalc** հարթակներում կարելի է գտնել եղանակի տեսության արխիվ:

Մերօրյա որոնողական համակարգերը թույլ են տալիս որոնում կատարել լուսանկարների միջոցով: Ներբեռնված նկարը գտնվում և ներկայացվում է այն բոլոր կայքերում, որոնցում տեղադրված է եղել: Համակարգերը նաեւ գտնում են տվյալ լուսանկարի՝ ոչ շատ ձեւափոխված տարբերակները, օրինակ, եթե նկարը դեմոտիվատորի ձեւով է լինում:

Նման հնարավորություն տալիս են բոլոր մեծ համակարգերը: Պետք է պարզապես այցելել դրանց՝ պատկերներ որոնող հատվածը .

<https://images.google.com>

<https://www.bing.com/images/>

<https://yandex.ru/images/>

Բացի դրանից, գոյություն ունի նկարների մասնագիտացված որոնողական համակարգ .

<https://www.tineye.com/>

Բոլոր այս համակարգերը աշխատում են թե՛ ցանցում գտնված, թե՛ համակարգչից կամ հեռախոսից բեռնված պատկերների հետ:

«Google Chrome» բրաուզերում նկարների վրա աջ քլիք կատարելով արդեն կարելի է որոնում իրականացնել:

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ



foi@foi.am



+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե



չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար



ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան




խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները



պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Հայաստանի Հանրապետություն,
Երևան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am



#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 7

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

Ֆեյքաքաղ



Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #7. Կեղծ պատկերների ազդեցության, լուսանկարների ու տեսանյութերի ստուգման գործիքների մասին

Հաճելի դիտում: Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3,
4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ,
27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am



<https://www.facebook.com/FOICenterArmenia/>